մեք յուսով մեծաւ մնամք ողջոյն ազգաւ ազգին կենաց Ձերոց և վասն բոլոր պալատի Ձերում օգուստոս ինքնակալ Ձերոց Բարձրագոյն Կայսերութեան

Խոնարհ ծառայ և Աղօթարար կաթողիկոս ամենայն Հայոց և Ծայրագոյն Պատրիարք Արարատեան Աթոռոյն Սրբոյ Էջմիածնի Դանիէլ։

Օրինակ հասցէի սոյն մուսավատիս

Նորին կայսերական մեծութեան ինքնակալին Ֆրանցայու եւ դբալի Իդալեոյ օգուստափառ Մեծ Նապոլիոն ամենաողորմած թագաւորի մերում

Ամենափառաւոր պալատն իւրոյ կայսերական բարձրութեան։

ԴԱՆԻԷԼ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԳԵՐՄ. ՖՐԱՆՑ Գ. ԿԱՅՍԵՐ

Ա.

Առ կայսրն Գերմանացւոց խնդիր վասն հրովարտակի, զի բաց յայնցանէ, որք ունիցին զգիր ի պատրիարգէն Արարատեան, այլ ոք ի կարգաւորաց, մի՛ կարող լիցի մտանել ի մէջ Հայոց եղելոց ի սահմանս տէրութեան իւրոյ։

Ամենալուսափայլ տիրող ինքնակալ հզօր կայսր Հոսմայ եւ Գերմանիոյ Ֆրանց երրորդ։

Ամենողորմած թագաւոր և պաշտպան հաւատացելոց

Աղօթարար անգին կենացդ և

Յիսուսի Քրիստոսի ծառայ Դանիէլ Կաթուղիկոս ամենայն Հայոց և Ծայրագոյն Պատրիարգ Արարատեան Աթոռոյ Սուրբ Էջմիածնի ամենախոնարհ երկրպագութեամբ զլիաբերան օրհնութիւնս հանդերձ Յիսուսանդ ողջունիւ Ձեզ մատուցանեմք։

Սէր և խնամակալութիւն Կայսերաց Հռոմէացւոց առ Թագաւորս և առ Քահանայապետս և առ ամենայն

հասարակութիւն ազգի Հայոց տարածեալ առատութեամբ յաւիտենից ժամանակաց յիշատակագրութեամբ նախնեաց մերոց՝ այսօր ևս ներգործէ առ ամենայն ազգս Հայոց զմեծ մխիթարութիւն։

Այլ քանզի օր ըստ օրէ տիրեաց անբաղդութիւնն ի վերայ ամենայնի Հայրենեաց մերոց բարձաւ թագաւորական ճոխութիւն. մատնեցաւ Քահանայապետութիւն անտանելի տառապանս ընդ բռնութեամբ բարբարոսաց և ցրուեցաւ ամենայն Ազգն Հայոց յերեսս ամենայն երկրի իբրև զոչխարս որոց ոչ իցէ հովիւ, պակասեցաւ ամենայն մխիթարութիւն ամենայն հասարակութեան հոգևորականաց և մարմնաւորականաց Հայոց մինչև իսպառ և եղաք առ հասարակ ըստ մարգարէին բանի որպէս՝ մեռեալ յաւիտենից և որպէս զանօթ կորուսեալ մոռացեալ ի սրտէ ամենայն մեծաց և փոքունց բարերարաց Հարց մերոց։

Այլ գոհանամք զԱստուծոյ, զի որպէս զերիս մանկունս ի մէջ զգալի հրոյն Բաբիլոնի, որպէս և զմանկունս եկեղեցւոյ Հայաստանեայց ի մէջ իմանալի հրոյն բարբարոսական բռնութեանց պահպանէ մինչև ցայսօր ուղղափառ խոստովանութեամբ սուրբ Աստուածութեան իւրոյ։

Շնորհ ունիմք և զմեծ ողորմութենէ Ամենողորմած Աթոռոյ Աստուածագուն Կայսերութեան ամենայն ռուսաց, զի ի հարիւրաւոր ամաց հետէ յատուկ մարգասիրութեամբ հայեցեալ առ ամենայն անայցելու ազգն Հայոց յաւել ամենայն հոգևորականաց և մարմնաւորականաց զմեծ ապահովութիւն։

Ի ձեռն ամենողորմած հրովարտակի յուսադրեալ զկաթուղիկոսն ամենայն Հայոց և զեպիսկոպոս և զքաջազունս և զազնուազգիս և զամենայն ազգն Հայոց ունիլ ի ներքոյ բարձրագոյն խնամոց և հովանաւորութեան

իւրոյ և զամենայն ազգն Հայոց եղեալ է տէրութեան իւրում՝ դաւանութեամբ սուրբ Լուսաւորչին Հայաստանեայց մեծի Գրիգորի Պարթևի յանձնելով ի ներքոյ կարգադրութեան Արարատեան Աթոռոյ կաթուղիկոսին ամենայն Հայոց հոգևորական կանոնաւ և եկեղեցական կարգաւ տարածեաց առ ամենայն կուսակալս սահմանաց տէրութեան իւրոյ զյատուկ հրովարտակ, ո՛չ ընդունել ի ներքս ի սահմանս (տէրութեան իւրոյ) ռուսաց զոք ի կարգաւորաց Հայոց որպիսի և իցէ աստիճանաւ առանց վկայական գրոյ Արարատեան կաթուղիկոսին և այսպէս շնորհեաց ամենայն Հայոց մերձաւորաց զմեծ խաղաղութիւն և հեռաւորաց զմեծագոյն մխիթարութիւն։

Առաւելապէս մխիթարեալ լինիմք զի և ամենողորմած հովանաւորութիւն Աթոռոյ սուրբ կայսերութեան Ցերոյ տարածեալ նոյնպէս ի վերայ հայոց եղելոց ի սահմանս հզօր տէրութեան Ցերոյ ի Սչով քաղաք և յայլ և այլ տեղիս ապահովացուցեալէ զնոսա ոչ սակաւ։

Բայց սակայն այս 30 ամ լինի յորմէ հետէ չէ եղեալ ի նոսա այցելութիւն Արարատեան Աթոռոյն և Կաթուղիկոսին ամենայն Հայոց և չէ հանդիպեալ ի մէջ նոցա եպիսկոպոս կամ վարդապետ Քարոզիչ և վերատեսուչ հաւատոյ և եկեղեցական կարգաց և չեն ունեցեալ զիմաստուն քահանայ կամ օրէնսգէտ ուսուցիչ առ որ բազում ինչ պակասեալ է ի նոսա յուղղութենէ կարգաց և կանոնաց եկեղեցւոյ Հայաստանեայց և բազում տգիտութիւն ևս ունակացեալ ի մէջ ողորմելի ժողովրդեան մերում։

Այլ և ի վերայ այնորիկ յամի 1807 յամսեանն օգոստոսի սուտ եպիսկոպոս մի Գրիգոր անուն, որ վասն լինելոյ իւրոյ մատնիչ Արարատեան Աթոռոյն և խանգարիչ բարեկարգութեան Հայրենի ազգին արգելեալ յա-

մենայն հոգևորականաց պաշտօնէ արտաքսեալ կայր յեկեղեցւոյ դատաստանաւ ժողովոյ բազում Արք-եպիսկոպոսաց, եպիսկոպոսաց, վարդապետաց և յաւագ երիցանց հարիւրաւորաց ի գլուխս 30 ամաց մտեալ առ նոսա խաբէութեամբ, պաշտեալ է ի Սչով քաղաք զպաշտօն եպիսկոպոսութեան և սերմանեալ է անդէն զբազում տարաձայնութիւնս և գայթակղութիւնս։

Վասնորոյ կոչեցեալ մեք հովիւ և կաթողիկոս ամենայն Հայոց ի Ծունկս անկեալ առաջի ամենողորմած Աթոռոյ Ձերոյ, խնդրեմք ամենախոնարհաբար զի թէ գտցէ շնորհս առաջի սուրբ կայսրութեան Ձերոյ եղիցի Հայաստանեայց ժողովուրդ սրբոյն Գրիգորի մեծի Պարթևի, մի խնայեսջիք զբարերարութիւն Աթոռոյ սուրբ կայսրութեան Ձերոյ 'ի հոգւոց և 'ի մարմնոց հոգևորականաց և մարմնաւորականաց Հայոց ապաւինելոց ի հովանաւորութիւն մեծաշուք հզօր թևոց Ձերոց, այլ գբերեալ Աստուածաբար մարդասիրութեամբ զբարերարութիւն նախնի կայսերաց Հռոմայեցւոց առ ազգն Հայոց կրկին նորոգեսջիք, և համաձայն Նորին Կ. Մ. ամենայն ռուսաց ամենողորմածաբար բարեհաճեսջիք կարկառել զմեծ ողորմութիւն Ձեր առ ամենեսին և յանձնել ի ներքոյ կարգադրութեան Արարատեան Աթոռոյ կաթողիկոսին ամենայն Հայոց հոգևորական կանոնք և եկեղեցական կարգք զազգն Հայոց եղեալս ի տէրութեան Ձերում դաւանութեամբ սուրբ եկեղեցւոյ Հայաստանեայց և հրամայել սահմանակալացն զի առանց վկայական գրոյ կաթողիկոսին Արարատեան Աթոռոյ մի ոք 'ի հոգևորականաց հայոց ունողաց զդաւանութիւն եկեղեցւոյ Հայաստանեայց ընկալցին 'ի ներքս 'ի սահմանս սուրբ կայսրութեան Ձերոյ և շնորհել նոյնպէս զբարձր հրաման մեծ հրովարտակ հաստատեալ մեծ կնքով ամենողոստոսափառ կայսրութեան Ձերոյ առ ի պահպանել ի Տաճարի Աթո-

ռոյ Արարատեան վասն յաւիտենական լիշատակի ողորմութեան և բարեհաճութեան Ձերոյ։

Ողջ լեր Ամենողորմած Օգոստոս կայսր և ողորմութեամբ Աստուծոյ երկնաւորի եղիցին աւուրք Ձեր իբրև զաւուրս երկնից։

Ամենողորմած թագաւոր Ձերոյ կայսերական բարձրութեան խոնարհ ծառայ և Աղօթարար

Դանիէլ կաթողիկոս ամենայն հայոց

Ցամի 1808 յամեանն...
Ի Սուրբ Էջմիածին
Աթոռն Արարատեան

Որովհետև երկու կերպ էին գրեալ վասն գրելոյ առ կայսրն Գերմանացւոց մեր և առաջինն ըստ մի կերպին առաջարկելոյ նոցա գրեցաք նոյնպէս ընդ երկար և մեր և ըստ միւսում կերպին գրեցաք ի ներքոյ ահա գերկոսին և յղեցաք առ Եպիսկոպոս Արքեպիսկոպոս Առաջնորդն Ռուսաստանու Հայոց զի զորն ետ կամեցի զայն մատուցէ.

Բ.

Դարձեալ նորին կայսերական մեծութեան վասն առաջնորդ կարգելոյ զԵփրեմ սրբազան արք-եպիսկոպոսն առաջնորդն Ռուսաստանի հայոց։

Կարող եւ Բարձր Ինքնակալ կայսր Հռոմայ եւ թագաւոր Գերմանիոյ Փրանց երրորդ

Ամենողորմած Հովանի եկեղեցւոյ Քրիստոսի

Աղօթարար Ձեր և

Յիսուսի Քրիստոսի ծառայ և այլն... Քսիստոսական ողջոյն և բազմապատիկ օրհնութիւն նուիրեմ խոնարհ երկրպագութեամբ։

Ցայտնի է ինքնին իսկ, զի որպէս ոչ ուղիղ ընթանայ նաւ առանց հմուտ նաւավարի, նոյնպէս և ոչ եկեղեցին Աստուծոյ կարէ ունել ուղիղ կառավարութիւն առանց օրէնսգէտ հանճարեղ առաջնորդի։

Վասնորոյ քանզի այս 30 ամ առանց վերատեսչութեան է եկեղեցի Հայոց որք գտանին ի ներքոյ հովանաւորութեան Ամենաբարեպաշտ սուրբ կայսրութեան Ձերոյ ի քաղաքն Սչով զի մինչ խսպառ տիրեցին մեզ մեղք, յաղագս ամենևին անփոյթ լինելոյ վասն նոցա հարկադրեալ եղէ այժմ կացուցանել նոցա առաջնորդ զփոխանորդն իմ և զառաջնորդն ամենայն Հայոց ռուսաստանու գերապատիւ Եփրեմ սրբազան Արք-եպիսկոպոսն, որ գլխաւորագոյնն է ամենայն հոգևորականաց Հայոց և մերոյս կաթողիկոսական կոնդակաւ յանձնեցաք նմա զհոգևորական վերատեսչութիւն ամենայն ազգին Հայոց որք գտանիցին ի ներքոյ լայնածաւալ հովանաւորութեան Ձերոյ դաւանութեամբ եկեղեցւոյ Հայաստանեայց։

Խնդրեմ ամենախոնարհաբար, զի և Ձերդ կայսերական բարձրութիւն ամենողորմածաբար բարեհաճեսջիք շնորհեսջիք լիշեալ փոխանորդին մերում զբարձրահրաման հրովարտակ զի համարձակ վարելոյ զամենայն գործս հոգևորականս և եկեղեցականս պատկանեալս առաջնորդութեան իւրոյ ըստ կանոնաց եկեղեցւոյ Հայաստանեայց, եւ հրամայել ամենայն կայսերական կառավարչաց և վերակացուաց ձեռնտու լինիլ նմա և առ ի նմանէ կարգեալ գործավարացն, յորժամ խնդիր լիցի ի նոցանէ առ ինքեանս ի պատահմունս կարևորացն որք վերաբերեցին առ հոգևորական կառավարութիւն։

Արդարև շնորհ մեծ առնես, որով և զբոլոր եկեղեցի Հայաստանեայց պարտաւորեսցես ամենողորմած Աթոռոյ սուրբ կայսրութեան Ձերոյ մինչև յաւիտեան։

Ողջ լեր օծեալդ Աստուծոյ օգոստոս ինքնակալ և որ էօծն Ձեզ պահպանեսցէ զթագաւորութիւն Ձեր անվախճան։

Ողորմած թագաւոր Ձերոյ կայսերական

բարձրութեան ամենախոնարհ ծառայ և աղօթարար

Դանիէլ կաթողիկոս ամենայն հայոց

Ցամի Տեառն 1808
Ցամսեանն յուլիսի... աւուրն
ՅԱԹՈՌՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
Ի ՍՈՒԲԲ ԷՋՄԻԱԾԻՆ,
ՈՐ ՅԱՐԱՐԱՏ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՐԴ. ԳՐՈՒԹԻՒՆԸ ՆԱՊՕԼԻՈՆ ՄԵԾԻՆ

Մեծ Նապոլիոն խաչասպակ ինքնակալ կայսր սիրող բարեպաշտութեան

Ամենողորմած թագաւոր և պաշտպան հաւատացելոց

Շնորհք և ողորմութիւն և բարերար ակնարկութիւն կայսերաց գաղիացւոց ի ժամանակս յառաջինս եղեալս է առ թագաւորս առ Քահանայապետս և առ բոլոր ազգն հայոց յոյժ առատութեամբ զորոյ լաւ ևս քան զմեզ կարող էք գիտել ի նախնեաց պատմութեանց։

Բայց յօրէ վերջանալոյ թագաւորական ճոխութեան հայոց մինչև ցայսօր ժամանակի, թէպէտ ջերմեռանդութիւն սիրոյ Քահանայապետաց և Ազգի Հայոց կայ մնայ նոյնպէս հաստատուն կերպիւ, այլ պսակ ջերմեռանդութեան նոցին նշան քաղցր ակնարկութեանց տիեզերակալաց Գաղղիացւոց, նաև գիր ողորմութեան անգամ բոլորապէս վերջացեալ. կարօտ եմք ազգովին և համարիմք մեզ այն անբաղդութիւն ի վերայ անբաղդութեանց։

Առիթ ցնծութեան եղև բազմավիշտ հոգևորականացս և Արարատեան Աթոռոյն Էջմիածնի մինչ յամն 1804, լուր եհաս յականջս մեր, թէ գիր ողորմութեան Ձերոյ կայսերական բարերութեան ունիմք ստանալ. այլ